Մատենադարանի նախագծի ճարտարապետն է Արտակ Ղուլյանը, շինարարությունն իրականացնում է «Սպիտակ տուն» ՍՊ ընկերությունը:

Հոգեպարար արարողության ժամանակ օրհնվեցին կառուցվող Մատենադարանի հիմքերը՝ մաղթանքով, որ Մատենադարանը անսասան մնա ի վայելումն հայոց ազգի:

Այնուհետև Մայր Աթոռի Լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանն ընթերցեց հիմնօրհնեքի հիշատակարանը, որը հետո զետեղվեց «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի հիմքերի մեջ:

«**Մատենադարան-գիտական կենտրոնը իր ծառայությամբ ու գործունեությամբ պիտի նպաստի հայոց ազգային-եկեղեցական կյանքի անդաստանում աստվածաբանական եւ հայագիտական մտքի զարգացմանը՝ հավելելով այս ասպարեզներում առկա նվաճումներն ու ձեռքբերումները:**

Հայրապետական այս գրով Մեր բարձր գնահատանքն ենք հայտնում ազգասեր ու եկեղեցանվեր բարերարներին, որոնց նյութական հոգածությամբ եւ ազնիվ վաստակով իրականացվում է այս գիտական կենտրոնի շինությունը, որն իր հարուստ գրադարանով, մասնագիտական սպասարկումով կարեւոր ներդրում է բերելու՝ աստվածաբանության եւ հայագիտության ոլորտները նոր աշխատությունների արգասիքներով արդյունագարդելու առաքելությանը:

Թող Փրկիչ մեր Տերը միշտ շեն ու պայծառ պահի Հայրենի մեր երկիրը, Եկեղեցիս Հայաստանյայց, Ամենախնամ Իր Աջը հովանի դարձնի ազգիս Հայոց եւ երկնառաք բյուր օրհնությամբ պահպանի բարեպաշտ Մանուկյան ընտանիքին՝ նորանոր հաջողություններ շնորհելով ազգաշահ եւ եկեղեցաշեն նրանց բարի ու առաքինի գործերին. Ամեն»,- ասվում է հիշատակարանում:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը, ՀՀ Վարչապետը, տիար Վաչե Մանուկյանը եւ հյուրերը ծանոթացան շինարարության ընթացքին, կատարված աշխատանքներին:

Հիմնօրհնեքին նաեւ ներկա էին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, գիտության եւ մշակույթի գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ԲԱԲԿԵՆ ԵՒ ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիտ Մկրյաններին (Ֆիլադելֆիա, ԱՄՆ)՝ հայ ժողովրդին եւ Եկեղեցուն մատուցած օգտաշատ ծառայությունների համար:

Հանդիսության սկզբում իր սրտի խոսքն ասաց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը՝ անդրադառնալով Մկրյան ամոլի բացառիկ կեցվածքին հանդեպ Հայոց Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը նրանց այդ բարձր պատվին արժանացնելու համար: Այնուհետեւ մեծարյալների կյանքի եւ գործունեության մասին խոսեց տիար Երվանդ Ազատյանը:

Մինչ շքանշանի հանձնումը Մայր Աթոռի Լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանն ընթերցեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը:

«Ազգօգուտ եւ եկեղեցանվեր Ձեր ծառայությունը Տիրոջ բարեխնամ օրհնության ներքո արգասավորված է բարի արդյունքներով: Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմի եւ ի մասնավորի Ֆիլադելֆիայի Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ եկեղեցու վարչական մարմիններում ստանձնած հանձնառություններով եւ կատարած ազնիվ նվիրաբերումներով Դուք տասնյակ տարիներ ծառայում եք Միացյալ Նահանգներում բնակյալ հայորդյաց համայնքային կյանքը առավել կազմակերպված, շեն ու պայծառ դարձնելու առաքելությանը:

Ձեր վաստակը հարստացրել եք նաեւ ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կատարած ընծայաբերումներով, ՀԲԸ Միության, Թեքեյան Մշակութային Միության, Վարդանանց Ասպետների, Հայկական Համագումարի, «Արարատ» Երիտասարդաց Կենտրոնի եւ ազգային այլ կրթական ու մշակութային հաստատությունների գործունեության ի նպաստ բերած ազնիվ ջանքերով ու սրտարուխ նվիրաբերություններով: Գոհունակություն է Հայրապետիս համար նաեւ, որ Դուք մշտապես ազնիվ հոգատարություն եք դրսեւորում մեր եկեղեցականաց հանդեպ՝ աջակցելով նրանց առողջական խնդիրների լուծմանը եւ հովվական առաքելության իրականացմանը: Ուրախությամբ ենք անդրադառնում Ձեր ինքնաբուխ հանձնառությանը՝ ներդրում բերելու Ջավախքում մեր Սուրբ Եկեղեցու գործունեության առավել զորացմանն ու արդյունավորմանը: Առ Ասված փառաբանական աղոթքն է Մեր հոգում, որ ազգս հայոց ունի Ձեզ պես հավատավոր, ազգասեր, եկեղեցասեր ու Էջմիածնասեր զավակներ»,- ասվում է Հայրապետական կոնդակում:

Ապա Նորին Սրբությունը Հայոց Եկեղեցու բարձրագույն պարգեւը հանձնեց Բաբկեն եւ Անահիտ Մկրյաններին: Տիար Բաբկեն Մկրյանն իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց Հայոց Հայրապետին՝ բարձր գնահատանքի արժանացնելու համար:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն անդրադարձավ մեծարյալների տարիների վաստակին եւ ազգային-եկեղեցական կյանքում դրսեւորվող նրանց ապրվածասեր ու ծառայասեր ոգուն: Գարեգին Բ Հայրապետը մաղթեց, որ Բարձրյալ Տերը հանապազ զորավիգ ու աջակից լինի Մկրյանների ընտանիքին՝ պարգեւելով քաջառողջ կյանքի բազում օրեր եւ գործոց մշտանորոգ հաջողություններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Գոհունակ լինում եմ, երբ տեսնում եմ ազգային մշակույթի ներկայացուցիչներին»